RUMELS MANAGEMENT SOLUTIONS

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1 կիսամյակ 2024

# Բովանդակություն


- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 1 կիսամյակ 2024թ. Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

# Զուտ շահույթ

- 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանում գործող 18 բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **172 մլրդ. ՀՀ դրամ,** ինչը **30 մլրդ. ՀՀ դրամ** կամ **21%**-ով ավել է քան **2023** թվականի նույն ժամանակաշրջանում գրանցած արդյունքը:

- Ամենամեծ շահույթը արձանագրել է Արդշինբանկ-ը շուրջ **50,1 մլրդ. ՀՀ դրամ**:

***Բանկերի զուտ շահույթը - 1-ին կիսամյակ 2024 / 2023***
***(մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2024թ. 1-ին կիսամյակում աճել են **544 մլրդ ՀՀ դրամով,** կամ **5,9%**:

- Առ 30.06.2024, ընդհանուր ակտիվները կազմել են **9.728 մլրդ ՀՀ դրամ**:

***Բանկերի ընդհանուր ակտիվները - 30.06.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱՄԻՈ ԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **57.9%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ,Ամերիաբանկ և ԱՄԻՈ ԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.9%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **18,3%:**

## *Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.24*



# Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում աճել է **6.8%-**ով:
- Առ 30.06.2024 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **5.372 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **55%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

***Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 1-ին կիսամյակ 2024 թ. (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ԱԿԲԱ ԲԱՆԿ, *ԱՄԻՈ ԲԱՆԿ,* եւ Ինեկոբանկ*)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **59.9%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ *ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **43.6%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է` **19.9%:**

## *Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.24*



# Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում աճել են **377 մլրդ ՀՀ դրամով,** կամ **4.9%:**

- Առ 30.06.2024, ընդհանուր պարտավորությունները կազմել են **8.082 մլրդ ՀՀ**:

***Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 30.06.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)***



# Հաճախորդների ընթացիկ հաշիվներ / ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2024թ. 1-ին կիսամյակում աճել են **198 մլրդ ՀՀ դրամով,** կամ **3.6%**:
- Առ 30.06.2024, ընդհանուր ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **5.714 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **71%:**

**Հաճախորդների ընթացիկ հաշիվներ / ավանդներ - 30.06.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)**



# Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում **34 մլրդ ՀՀ դրամով,** կամ **9%-ով** և կազմել է առ 30.06.2024 շուրջ **424 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13-ը**:

***Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.06.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր կապիտալ

- 2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **167 մլրդ ՀՀ դրամով**, կամ **11.3%** ու կազմել **1.646 մլրդ ՀՀ դրամ**:
- Այս աճը հիմնականում պայմանավորված է գրանցված շահույթով, որը կազմել է **172 մլրդ ՀՀ դրամ**:

***Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 30.06.24 և 31.12.23 (մլն ՀՀ դրամ)***



# Ընդհանուր կապիտալ

- Առ 30.06.2024թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **50%**-ը և հավասար է **825 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.06.2024 թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **47%**-ը և հավասար է **777 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 30.06.2024 թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **3%**-ը և հավասար են **44 մլրդ ՀՀ դրամ:**

## Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.06.24



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

# *RUMELS Management Solutions*

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09

Էլ. հասցե՝ info@rumels.am

Կայք՝ www.rumels.am